



ՇԱՀԵ ԱՐՔԵՊ. ԱԾԵՄՅԱՆ

ՇՆՈՐՀԱԼԻՆ ՕՏԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Հայկական ամեն գրադարանի վրա, հին թե արդի հայերեն գիրքերու շարքին մեջ, բազմաթիվ են օտար լեզուներե թարգմանված գործերը: Հազվագյուտ են, սակայն, հայ հեղինակները, որոնք արժանացած ըլլան բազմելու օտարներու գրադարաններուն մեջ, օտար լեզուներու թարգմանված: Ներսէս Ընորհալիս առաջիններէն եղավ. անոր գործերը ներկայացվեցան օտար ընթերցողին հարյուր հիսուն տարիներ առաջ. արդեն իսկ:

Մեզի ծանոթ Ներսէս Ընորհալիսի գործերուն ամենէն հին թարգմանությունը կատարված է 1829-ին, Ժողեֆո Գաբելլեդիի անուն վարդապետի մը կողմէ: Իտալացի ծագումով այս կրօնավորը, զոր Մխիթարյան հայրերը կոչած են Հովսէփ վրդ. Կապելլեդի¹, եղած է առաջին վեներտիկցին, որ զբաղած ըլլա հայագիտությամբ: Ան, առաջին անգամ, Վենետիկի Մխիթարյաններու տըպարանէն ի լույս ընծայեց Ներսէս Ընորհալիսի «Ընդհանրական»-ը, լատիներէն թարգմանությամբ²: Ժողեֆո Գաբելլեդիի գիրքին կողքին վրա ինքզինք կկոչէ «Presbyter Venetus» (վեներտիկցան երեց). իր Հայաս-

տանի մասին գրած գիրքին³ առաջին էջին վրա կկոչէ «Անդամ Մխիթարյան հայկական ճեմարանին»: 1833-ին նույն Ժողեֆո Գաբելլեդիին երկու հատորներով հրատարակեց Ներսէս Ընորհալիսի ատենին ծանոթ գործերու լատիներէն ամբողջական թարգմանությունը⁴:

Առաջին հատորը կապրունակէ Ներսէս Ընորհալիսի թուղթերը և ճառերը: Կսկսի «Ընդհանրական թուղթ»-ով և կընդգրկէ իր կաթողիկոսական օծման առթիվ արտասանած ճառը, իր ելոյթը՝ Գրիգոր Կաթողիկոսի անունով խմբագրած հավատո գիրքը՝ ուղղված Մանվել կայսեր փեսային՝ Բելա իշխանին, որ կգտնվեր Մամեստիս, Մանվել կայսեր հետ ունեցած թղթակցությունը՝ բյուզանդական եկեղեցիին հետ փորձված միութենական ճիգերուն վերաբերյալ, Տարսուհի Պողոս քահանային ուղղված թուղթը, Կարս քաղաքի բնակիչներուն ուղղված շրջաբերական գիրքը՝ իրենց նոր առաջնորդ Խաչատուր եպիսկոպոսի ընտրության առթիվ, Սամսատի եկեղեցիին ուղղված թուղթը Արևորդիներու դարձին առիթով և, վերջապէս, մէկ խոսքով, Ներսէս Ընորհալիսի դավանական, միութենական և կարգադաս-

¹ Հ. Բարսեղ վ. Մարգիսյան, Երկհարյուրամյա գրական գործունեություն և ճշանավոր գործիչներ, Վենետիկ, 1905:

² Sainte Narseles Clajensis Epistola Pastoralis, ex armento latinatate primum donata, a D. Josepho Cappelletti, 1829, p. 92.

³ L'Armenta, opera di Giuseppe Cappelletti, Firenze, 1841.

⁴ Sancti Nersesis Clajensis Armenorum Catholici opera nunc premium ex Armenio in Latine conversata notisque illustrata. Venetiis, typis PP. Mekhitaristarum, 1833, volumina duo, pp. 287 et 328, in 8^o.

կան հարցերու մասին՝ իր ժողովուրդին, եկեղեցիին և օտարներուն ուղղած ծանոթ բոլոր գրությունները:

Երկրորդ հատորը կապումնակե լատիններենով թարգմանությունը Շնորհալիի աղոթքներուն և մեկնություններուն: Կակի «Հաստով խոստովանիմ»-ի քսանչորս տուներու թարգմանությամբ, որուն կհետևի Մատթեոսի Ավետարանի կիսատ մնացած մեկնության թարգմանությունը: Թեև Հովհաննես Երզնկացին ամբողջացուցած է այս մեկնությունը, զոր Շնորհալին հասցուցած է մինչև Ե գլուխի 18-րդ համարը, սակայն թարգմանիչը նախընտրած է թարգմանել Շնորհալիի հեղինակած մասը միայն: Մատթեոսի այս մեկնության կհետևին ներքոյ մը «Հրեշտակապետաց» և «Բարձրացուցեք»-ի մեկնությունը:

Շնորհալիի «Ընդհանրական»-ը ծանոթ էր արևմտյան հայագետներուն: Լատինական այս թարգմանությունեն դար մը առաջ ծանոթ արևելագետ և հայագետ Villefroy «Ընդհանրական»-ի մասին գրած էր արդեն. «Այս թուղթը գեղուն է ամուր հավատքով. հոն կարտահայտվին հարգանքի բոլոր գզացումները, զորս Ներսես կտածեր կրոնքի, եկեղեցիի և եկեղեցական կարգապահության հանդեպ»:

Գաբելյերդի լատիներենի թարգմանեց Շնորհալիի արձակ գրությունները միայն՝ քաջատրեղով իր հաուսաբանին մեջ, թե չէր կրնար թարգմանել բանաստեղծությունները, որովհետև պիտի կորսնցնեին լեզվական նրբություններով ստեղծված իրենց հրապույրը:

1810-ին Մխիթարյան հայերու տպարանեն լույս կտեսներ Ներսես Շնորհալիի «Հաստով խոստովանիմ»-ը, վեց լեզուներու թարգմանված: 1823-ին Շնորհալիի ամենեն ծանոթ և ժողովրդական այս աղոթքը լույս տեսավ քսանչորս լեզուներու թարգմանված⁵: Ասոնք էին. գրաբար և աշխարհաբար հայերեն, դասական և արդի հունարեն, լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, իրլանդերեն, գերմաներեն, հոլլանդերեն, անգլերեն, սպաներեն, ռուսերեն, բուլղերեն, իլլիրերեն (պալքանյան լեզու), սերպերեն, հունգարերեն, թրքերեն, պարսկերեն, արաբերեն, եբրայեցերեն, գաղղերեն, ասորերեն և վրացերեն:

⁵ Catalogue des livres tant imprimés que manuscrits de la Bibliothèque Royale de Paris, lettre U, no. 2, p. 57.

⁶ Preces S. Niersis Clajensis Armentorum Patriarchae viginti quatuor linguis editae, Venetiis, 1823, I vol. 422 pp.

Նույն աղոթքը, երեսունվեց լեզուներու թարգմանված, լույս տեսավ 1882-ին: Նախորդ լեզուներուն վրա ավելցված էին հետևյալները. գանթարերեն, սելդերեն, դաներեն, կրեդանտերեն, իսլանդերեն, բորթոկերեն, մալայերեն, հնդկերեն, սանսկրիտերեն, չինարեն, եթովպերեն և ալպաներեն:

ՀՈՉԵԿԱՆՈՐ
Ա Ղ Օ Թ Ք
Տեառն Ներսիսի Սրբազան
Կաթողիկոսի Հայր
Տպարան Երևանյան լեզուգր.
Արտ-ի: Ա. Բ. Մ. Ե. Լ. Կ. Ե. Լ.
Մեյ-Կեյ:
1830. Ի Մ Ո Ս Կ Ո Վ. Ը. Բ. Կ. Ե.
Ի տպարանի Ղեկավարի Հայր
Տեառն Լազարեանց:



МОЛНТВА
СВ. ПАТРИАРХА НЕРСЕСА

Издана на 19 языках, Армянскомъ, Россійскомъ, Греческомъ, Грузинскомъ, Сербскомъ, Французскомъ, Итальянскомъ, Английскомъ, Латынскомъ, Исландскомъ, Венгерскомъ и Турецкомъ.

Издано въ Миссии Мхитар-Маснара.

МОСКВА.

Въ Типографіи Имперіальнаго Печатнаго
Восточнаго Департамента.

1830.




Անտարակույս որ գեղեցիկ էր Մխիթարյան հայերու կատարած այս աշխատանքը, աշխարհի բոլոր ծանոթ լեզուներով մատչելի ընելու Շնորհալիի անգուգական «Հաստով խոստովանիմ»-ը բոլոր ժողովուրդներուն, և իր ժամանակին արժանացավ լայն ուշադրության: Մեզի համար դժվար է ըսել, թե թարգմանությունները որքա՞ն հարազատ են և հաջող. սակայն դատելով ֆրանսերեն, անգլերեն և արաբերեն թարգմանություններեն, կարելի է հետևցնել, թե բոլորն ալ պարկեշտորեն կատարված, խնամքով և օտար լեզուներու քաջաճանոթ անձերու կողմե եղած թարգմանություններ են:

1828-ին, Հովհաննես վրդ. Զոհրապյան հրատարակեց «Ողբ Եղեախոյ»-ն⁷: Հրատա-

⁷ Élégie sur la prise d'Edesse par les Musulmans, par Nersès Klajetsi, patriarche d'Arménie; Paris, Donbey-Dupré, 1828, 129 pp.

րակությունը հոգաց Ասիական Հնկերակցությունը (Société Asiatique) Փարիզի մեջ: Այս առթիվ «Խաչակրություններու Մատենադարան»-ի (Bibliothèque des Croisades) հրատարակիչ Միշո (Michaud) խնդրեց Փարիզի Արքայական Մատենադարանի դասախոս Ծախան Զրպետեն (Chahan Cirbied), որ կատարե անոր ֆրանսական թարգմանությունը, որ լույս տեսավ 1829-ին, խաչակիրներու պատմագիրներու շարքին մեջ, հունական և հայկական աղբյուրներու հրատարակության մեջ⁸:



Հրատարակիչը հուսախաբության խոսքերով անդրադարձած է Զոհրապյանի այս թարգմանության և «Ողբ»-ին: «Եղեսիո քաղաքը խոսիլ տալու գաղափարը բանաստեղծական կողմ մը ունի անշուշտ, սակայն պատրանքը շատ կերկարի և երկին վրա կուտարածե միօրինակություն մը, զոր չի փրկեր ոչ պատկերներու փայլը և ոչ ալ ոճի ինքնահատկությունը»: Երբ թարգմանվածը շնորհալի նրբություններով հյուսված բանաստեղծություն մըն է, իսկ թարգմանությունը ուզած է ըլլալ բառացի, բանաստեղծական գեղեցկությունը զոհելով հավատարմության մը չորցնող մտահոգության, արդյունքը չի կրնար տարբեր ըլլալ: Բանաստեղծական այս երկը կպարունակե անշուշտ պատմական տեղեկություններ, մշակված սակայն գրական սեռի մը պահանջներուն համաձայն, գույն և հուզականություն զգեցած: Երբ բանաստեղծական այս երկը մերկացվի իր գեղեցկությունը ապահովող գրական տարագեն և վերածվի պատմական տեղեկագիրի, անտարակույս որ շատախոսության և ավելորդաբանության տպավորության մը մեջ կկորսվի: Իրականության մեջ, «Ողբ»-ը մեր գրականության մեջ նախա-

տիպարը հանդիսացաւ գրական ձևի մը, որ հետագային քանիցս ընդօրինակվեցաւ պատմական աղետներ նկարագրելու:

Ուրեմն արևմտյան աշխարհին հրամցվեցաւ Ծնորհալին 1830-ական թվականներուն: Անոր գործերեն աստվածաբանական արձակները, աղոթքներեն «Հաւատով խոստովանիմ»-ը և բանաստեղծություններեն «Ողբ Եղեսիոյ»-ն ծանոթացուցին հստակամիտ աստվածաբանը և մեծ աղոթողը: Կես դար ետքն է միայն, որ թարգմանվեցան անոր շարականներեն մի քանին:

1886-ին, Պելգիքայի Լուվեն (Louvain) քաղաքին մեջ հրատարակված «Բրիտոնյա Հայաստանը և անոր գրականությունը» գիրքին մեջ, Ֆելիքս Նև, նույն քաղաքի մեծածառն համալսարանի բրոֆեսոր, Պելգիքայի Թագավորական ակադեմիայի անդամ, թղթակից-անդամ և Բեթերսպուրկի ակադեմիային և Վենետիկի հայկական ճեմարանին, ֆրանսերենի թարգմանած և հրատարակած է Ծնորհալիի շարականներեն կարեւորները: Ասոնք են. Ալլակերպության Բ և Գ օրերու կանոնը⁹, («Մտագայթ փառաց Հօր...»), Հոգեգայտատի Ժաշու շարականը¹⁰, («Որ ի հարաշարժ ի յաղբերէն...»), և Պողոս-Պետրոսի կանոնը¹¹:

Այս մեծ գիտնականը և հմուտ հայագետը հարազատ և խնամված թարգմանությունը կատարած է վերոհիշյալ շարականներուն, իր գիրքին սկիզբը, ուր թարգմանաբար ներկայացուցած է Ալլակերպության, Հոգեգայտատի, Հովհաննոս Կարապետի և Պողոս-Պետրոսի տոներուն առթիվ երգված շարականները առհասարակ: Նև հաջողած է ֆրանսական լեզվի պարզության և հստակության մեջ փոխադրել հայ շարականի այս մասերը, անոնց ներշնչումի ջերմությամբ և արտահայտության ձևի քաղցրությամբ:

Յնծան այսօր լեռինք Աստուծոյ,
Արարողին ելեալք ընդ առաջ,
Պարակցին յախտենական լեռանց
Դասք առաքելոց եւ մարգարէից:

Elles se réjouissent aujourd'hui
Les montagnes de Dieu
Allant au devant du Créateur,
Les troupes des apôtres et des prophètes
Associés aux montagnes éternelles.

Կարելի չէ պելգիքացի այս հայագետին կատարած թարգմանության մասին խոսիլ,

⁸ Felix Nève, L'Arménie Chrétienne et sa Littérature- Louvain, 1886, 400 pp.—էջ 37—75:

¹⁰ Նույնը, էջ 98, 99—100:

¹¹ Նույնը, էջ 150—154:

⁸ Bibliothèque des Croisades, Chroniques grecques et arméniennes; Paris, 1829, pp. 499-504.

առանց հիշելու, թե անոր նպատակն է՝ կաթոլիկ իր ընթերցողին ներկայացնել շարականագիր բանաստեղծին մեջ կաթոլիկ դավանանքին միտող արտահայտություններ: Նախ իր կատարած ընտրությունը. Հոգեգալստյան կանոնը և Պողոս-Պետրոսի նվիրված շարականները: Առաջինին մեջ կփնտրե փաստեր՝ հաստատելու համար, թե հայոց եկեղեցին առհասարակ և Ներսես Շնորհալին հատկապես հոռվմեադավան «եւ յորդոս»-ն խոստովանած են միշտ: Պողոս-Պետրոսի նվիրված շարականներուն մեջ Նև կընդգծե Պապական Աթոռի նկատմամբ մեր շարականագիրին ջատագովանքը իբրև «գլուխ առաքելոց»-ի Աթոռը և կհետևորդնե, թե այդ իսկ պատճառով՝ գլուխ է նաև ամբողջ եկեղեցին: Անցյալ դարու վերջերուն չէր կրնար տարբեր ըլլալ դիրքը հոռվմեական եկեղեցվո առնման պահպանողական կեդրոններին Լուվենի համալսարանի այս՝ դասախոսին, որ, Մխիթարյան հայրերու հետեւողությամբ, մեր եկեղեցվո մեծ առաջնորդներուն մեջ կաթոլիկություն միայն պետք է տեսներ: Չենք ուզեր բանալ դարձյալ անցյալին մեջ մոռցված այդ էջը և մտնել աստվածաբանական վիճարանության մը մեջ, որ վաղուց սպառած կնկատենք: Ուզեցինք հիշել միայն իրողությունը, թե 1886-ին, երբ Շնորհալին կներկայացվեր ֆրանսերեն ընթերցողին, ինչպես կոչմագովեր:

Մինչև այստեղ հիշված թարգմանությունները կպատկանին դասական գրականության: Ներսես Շնորհալի կհայտնվի անոնց մեջ իբրև մեծ աստվածաբանը, եկեղեցվո միության սրբազան գաղափարին նվիրված կաթոլիկոսը, միութենական տրամադրությամբ քրիստոնյա մյուս եկեղեցիներուն մոտեցող, բայց իր եկեղեցիին դավանանքը մաքուր պահող եկեղեցականը, սքանչելի աղոթողը, ազգային աղետի մը դիմաց՝ հայու ցավին մեծ քնարերգուն, և վերջապես՝ շարականներու գանձին՝ անմար փայլով պսպղուն մարգարիտներու շարքեր նետած հոգևոր բանաստեղծը:

Արշակ Չոպանյանն է, որ հայ գրականության միջնադարյան գեղեցկությունները ֆրանսական ճաշակին ներկայացուցած ատեն Շնորհալին կընտրե ժողովրդական իր ոտանավորները, ուսկորեն գրված¹²:

Չոպանյան ֆրանսերենի թարգմանած է տասնմեկ հանելուկներ միայն: Չանոնք կանխող ներածության մեջ. սքանչելի այս թարգմանիչը կբացատրե, թե «Հայաստանի բուրաստան»-ի այս երկրորդ հատորը նվիրված է ժողովրդական գրականության և թե Շնորհալիի դասական գործերը պիտի ներ-

կայացնե հայ դասական գրականության նվիրված հատորին մեջ, որ բնավ լույս չտեսավ:

~~~~~

Ε Τ Χ Η

του αγίου Νικεοϋχ.

—\*—

Възгласъ . По Гречески.

1. Μετὰ πίσεως ἑξομολογῆμαι καὶ προσκυνῶ Σὲ τὸν Πατέρα, Τὸν καὶ Πνεῦμα Ἅγιον, τὴν ἀπλαστον καὶ ἀθάνατον Φύσιν, τὸν κτίστην τῶν Ἀγγέλων, καὶ τῶν ἀνθρώπων, καὶ ὅλων τῶν κτισμάτων· Ἐΐλεσον τὰ κτίσματά σου.

2. Μετὰ πίσεως ἑξομολογῆμαι καὶ προσκυνῶ Σὲ τὴν Ἁγιωτάτην καὶ ὁμοῦσιον Τριάδα, τὴν μίαν Θεότητα, τὸ Φῶς τὸ ἀδιαίρετον, τὸν κτίστην τῆς Φωτὸς, καὶ διόκτιν τῆς σκότους· ἀποδιώξον ἀπὸ τῆς ψυχῆς μου τὸ σκότος τῆς ἁμαρτίας καὶ ἀγνοίας, καὶ Φώτισον ἐν τῇ ὁρᾷ ταύτῃ τὸν τῆς μου, δια τὰ δυνάμεις σου προσφέρω εὐπροσδέκτους δεήσεις, καὶ διὰ τὰ ἐπιτύχω παρὰ σοῦ τὰ ζητήματά μου.

Ա. Ներսես Շնորհալի. «Հավատով խոստովանման» (հունարեն)

Չոպանյանն վերջ. Շնորհալիի գործերին «Յիսուս Որդի»-ն է, որ թարգմանված է անգլերենի, Ամերիկայի մեջ, 1947-ին<sup>13</sup>: Թարգմանիչը՝ Jane S. Wingate, կինն է Henry Knowles Wingate-ի, որ 1890-են 1920 ավետարանչական քարոզիչ մը եղած է Թուրքիո մեջ և կատարած «outstanding educational and philanthropic work in Turkey», ինչպես կըսե գիրքին ձոնը: Իսկ Jane Wingate եղած է հայագետ և հայերեն անգլերենի թարգմանած բազմաթիվ հայկական հեղինակներ: Շնորհալիի «Յիսուս Որդի»-ն թարգմանած է ԺԶ դարու հայկական ձեռագիրի մը վրայեն, զոր Թադեոս Ժամ-

<sup>12</sup> La Roseate d'Arménie, II, pp. 6—10.

<sup>13</sup> Jesus Son; the Delphic Press, N. York, 1947.

կոչյալն անունով հայ մը ազատած է Կեսարիո Դերենկը (Derevenk)? վանքեն, իր իսկ նախատակելէն առաջ:

Մեզի ծանոթ և վերև հիշված թարգմանություններուն մեջ ամենէն գեղեցիկն է այս մեկը, հարազատությամբ, լեզվի պարզությունամբ, բանաստեղծական իր գնացքով և, թյամբ, բանաստեղծական իր գնացքով: Ամենտեղին է ըսել, իր շնորհալիությամբ: Ամերիկոսի հայագետը հաջողած է Օնորհալիի «Յիսուս Որդի»-ի բոլոր առաջնությունները պահել իր անգլերենին մեջ. աղոթքի բարեպաշտ շունչը, որ ալիք-ալիք կբարձրանա Հիսուսի կյանքի նկարագրության մեջէն, Նարեկացիի փոթորկոտ և խռովող ողբերգականության հակապատկեր՝ վճիռ և հանդարտ հոգիի մը հավասարակշռված երգն է, խորապես զգացված մեղքի գիտակցութենէն բարձրացող՝ սիրող և խնամող Աստուծո: Անգլերեն թարգմանությունը պահած է, առանց բնագիրէն շատ հեռանալու, բանաստեղծության թեթև կշռույթը, որ երկու հագար տողերը կազատե ձանձրութեն և հաճելի ընթերցվածի մը կվերածն: Առաջին տողէն մինչև վերջինը կկարդացվի ներքին երաժշտականության մը գրավիչ օրորին մեջէն, առանց բնավ տկարանալու: Անտարակույս որ թարգմանության այս հաջողությունը արդյունքն է թարգմանողի նորրբ զգացա-

կանության և հավատալոր հոգիին, որ անգամ մը ևս ապրած և ապրեցուցած է «Յիսուս Որդի»-ն իր լեզվին մեջ:

Մոտ երկու դարերէ ի վեր եւրոպական աշխարհին ծանոթ է Ներսէս Օնորհալի գրական իր արդյունքով, իսկ մի քանի տասնյակ տարիներէ ի վեր ամերիկացի հասարակության՝ իր «Յիսուս Որդի»-ով: Եվրոպայի պալատներէն սկսյալ, որոնք «Հաւատով խոստովանիմ»-ի բազմալեզու թարգմանության պատվո տեղ մը վերապահեցին իրենց գրադարաններուն մեջ, մինչև մեծ համալսարաններու հայագետները, որոնք հիացումով թարգմանեցին Օնորհալիի աստվածաբանական նամականին, հասնելու համար Վիեննայի, որ անգլերենի փոխադրեց Օնորհալիի աղոթքի հուզականությունը, երկար շարքը կկազմեն փաստերուն, թե Ներսէս Կլայեցին ոչինչ կորսնցուցած է իր հրապույրէն այն օրէն ի վեր, երբ այցի գնաց իրեն «Իմաստաւեր իմն Կոստանդնուպօլսեցի Թէորա անուն» և վերադարձին հայտարարեց. «Որպէս լուաք, այնպէս եւ տեսաք. զի նոր ոմն Գրիգորիոս Աստուածաբան յարուցեալ է»<sup>14</sup>:

<sup>14</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Երեւան, 1961, էջ 118:

